ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 286-Ա

2018ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի շրջակա միջավայրի պահպանման 4239 հոդվածի /բաժին 5 խումբ 6 դաս 1/ նախատեսված գումարից 9,2 /ինը հազար երկու հարյուր/ դրամ տեղափոխել շրջակա միջավայրի պահպանման 4111հոդված / բաժին 5 խումբ 6 դաս 1/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ դեկտեմբերի 24

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 287-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով, որոշում եմ՝

1.Ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.
1)Կապի և ազդարարման ծառայություն՝
Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Բալահովիտի փոստային բաժանմունքի պետը.
2)Բժշկական ծառայություն՝
Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ-ի տնօրենը.
3)Ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայություն՝
Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը
4)Տրանսպորտային ծառայություն՝
Ծառայության պետ՝ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը.
5)Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝
Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի օպերատորը.
6)Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝
Ծառայության պետ էլեկտրիկ.
7)Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝
Ծառայության պետ՝ համայնքի անասնաբույժ.
8)Հասարակական կարգի պահպանման ծառայություն՝
Ծառայության պետ՝ համայնքի սպասարկող ոստիկան

Ծառայության պետ՝ համայնքի ավագանու անդամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ դեկտեմբերի 24

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 288-Ա

<<ԲՈՒ_ԲԻ>> ՍՊԸ_ԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 42-Ն որոշման և հաշվի առնելով <<Բու-Բի>> ՍՊԸ-ի 2018թվականի դեկտեմբերի 24-ի դիմումը՝ որոշում եմ

1. Թույլատրել <<Բու-Բի>> ՍՊԸ-ին տեղադրել այլ արտաքին գովազդ /36ք.մ/ գ.Բալահովիտ 1-ին փողոց հասցեում, 2019թվականի հունվարի 1-ից 2019թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Հաստատել այլ արտաքին գովազդի էսքիզը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ դեկտեմբերի 24

գ.Բալահովիտ

Հավելված 1
Բալահովիտ համայնքի
ղեկավարի 2018թվականի
դեկտեմբերի 24 -ի թիվ 288 -Ա որոշման

ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ

1	3	6 այլ արտաքին գովազդ
2	3	6 այլ արտաքին գովազդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 289-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 147 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-34-րդ հոդվածների, Կոտայքի մարզպետի 2018թվականի դեկտեմբերի 21-ի N 381-Ա որոշումը, որոշում եմ

1. Բալահովիտ համայնքի ղեկավարի 2007թվականի մարտի 3-ի <<Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու մասին>> N 147 որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետում <<Վաչագան Թովմասյան>> բառերը փոխարինել <<Պավել Ցուգունյան>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ դեկտեմբերի 26

գ.Բալահովիտ